Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 մարտի 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-123/23» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար խողովակների, ձևավորվածքների, սողնակների, կափույրների և փականների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-123/23» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1, 2, 3, 12 և 13-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկը և 2023 թվականի սեպտեմբերի 11-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկի միջև կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-123/23-3-01/316 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկին կողմից էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) սահմանված մատակարարման ժամկետները (պայմանագրի կնքման օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում): Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները և Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկից ստացված գրությունը Պայմանագիրը մասնակի լուծվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ Ա/Ձ Ալեքսանդր Շենյուկին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**